ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Մարզկենտրոն - Հրազդան

Քաղաքային համայնքներ - 7

Գյուղական Համայնքներ - 60

Բնակչությունը - 254700
քաղաքային - 138400
գյուղական - 116300



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Բովանդակություն

Ներածություն 2

Կոտայքի մարզի տնտեսական և ժողովրդագրական նկարագիրը 2

Արդյունաբերություն, սպասարկման ոլորտ և զբոսաշրջություն 2

Ֆինանսական բնագավառ 4

Տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգում . . 5

Կրթություն 8

Մշակույթ և սպորտ 10

Սոցիալական ապահովություն 12

Առողջապահություն 13

Երեխաների իրավունքների պաշտպանություն 15

Հողաշինություն և հողօգտագործում 15

Գյուղատնտեսություն և բնապահպանություն 16

Քաղաքաշինություն 21

Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր 24

Ներքին աուդիտ 25

Փաստաթղթաշրջանառություն, քաղաքացիների ընդունելություն, ... 25

Կադրային աշխատանք. 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզում նախանշված և իրականացված ծրագրերը հիմնականում նպատակ են ունեցել ապահովել մարզային տարբեր ենթակառուցվածքների բնականոն գործունեությունը, մարզի համայնքների շարունակական զարգացումն ու տարբեր ոլորտներում արդյունավետ աշխատանքի կազմակերպումը:

Մարզային գործընթացների հիմնական առանցք են համարվել ՀՀ Նախագահի և ՀՀ Կառավարության կողմից իրականացվող տարածքային քաղաքականության գերակա ուղղությունները, որոնք արտացոլվել են մարզպետարանի կողմից մշակվող բոլոր ծրագրերում և նախաձեռնություններում:

Համայնքներ կատարվող պարբերական այցելությունների շրջանակներում բնակիչների հետ քննարկվել և բացահայտվել են համայնքային աշխատանքների հիմնական այն ուղղությունները, որոնք ունեն հանրային կարևորություն և ազգաբնակչության բարօրության ապահովման տեսանկյունից պահանջում են համակողմանի լուծումներ:

Մարզի համայնքներում առկա հրատապ խնդիրների, ինչպես նաև վերջիններիս հնարավոր լուծումներ տալու նկատառումներով կատարվել են համակողմանի վերլուծություններ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատվել է Կոտայքի մարզի զարգացման 2015-2018 թվականների ծրագիրը, որը հիմք է հանդիսանալու առաջիկա տարիների աշխատանքներն առավել համակարգված կազմակերպելու հարցում:

Սերտ համագործակցություն է ծավալվել հանրապետական գործադիր մարմինների՝ մարզում գործող տարածքային ծառայությունների հետ, քայլեր են ձեռնարկվել մարզային ենթակայության կազմակերպությունների աշխատանքները առավել որակյալ դարձնելու նկատառումներով:

Տարեկան գործունեության առաջնահերթություն է համարվել կատարված աշխատանքի հրապարակայնության և մարզպետարանի կողմից տնօրինվող տեղեկատվության մատչելիության ապահովումը, որի առանցքային բաղադրիչ է համարվել մարզպետարանի պաշտոնական http://kotayk.mtaes.am կայքը:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կոտայքի մարզը կազմավորվել է 1996 թվականին և ընդգրկում է Կոտայքի, Նաիրիի և Հրազդանի նախկին վարչական շրջանները: Կոտայքի մարզն ունի 67 համայնք, այդ թվում՝ 7 քաղաքային:

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 253600 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից՝ 137700-ը քաղաքաբնակներ են (54.3%), 115900-ը՝ գյուղաբնակներ (45.7%):

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերություն

2015թ. մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 140.0 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 167.4 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալները նվազել են 16.4%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա համեմատ ավելի քան 15.3 մլրդ. դրամով պակաս էլեկտրաէներգիայի արտադրությամբ, ինչը

հետևանք է սպառման ծավալների նվազման՝ 2015թ. արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը կազմել է 55.1 մլրդ. դրամ: Նվազել են նաև մշակող արդյունաբերության ցուցանիշները 9.0 մլրդ դրամով կամ թողարկվել է 80.5 մլրդ դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում նվազում գրանցվել է հիմնականում խմիչքների (33.8%), սննդամթերքի (2.8%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (13.6% և հիմնային մետաղների արտադրության (10.9%) ճյուղերում, իսկ աճ արձանագրվել է դեղագործական ապրանքների (7.6%) և կաշվե իրերի արտադրության (5.2%) ոլորտներում: 2015թ. հանքագործական արդյունաբերության ոլորտում գրանցվել է աճ 1.3 մլրդ. դրամի չափով՝ կամ թողարկվել է 3.3 մլրդ. դրամի արտադրանք:

Արտադրության ծավալների նվազմանը զուգընթաց նվազել են նաև արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները 15.7%-ով, կամ իրացումը կազմել է 139.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 165.6 մլրդ դրամի դիմաց:

2015թ. հաշվետու ժամանակահատվածում արդյունաբերական արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 106.9 մլրդ դրամ, իսկ արտաքին շուկայում՝ 32.7 մլրդ դրամ, որից ԱՊՀ երկրներ արտահանվել է 16.6 մլրդ դրամի և այլ երկրներ՝ 16.1 մլրդ դրամի արտադրանք: Այսպիսով արտադրանքի արտահանման ծավալը 2014թ. համեմատ նվազել է 26.4 %-ով:

մլն դրամ

	2014թ.	**2015թ.**	**շեղում** +/-	**%**
Թողարկված արտադրանքի ծավալը	167357.5	139973.5	-27384.0	83.6
Արտադրանքի իրացման ծավալը	165598.2	139664.2	-25934.0	84.3
Արտահանման ծավալը, որից՝	44450.3	32725.8	-11724.5	73.6
ԱՊՀ երկրներ	29368.5	16577.9	-12790.6	56.4
այլ երկրներ	15081.8	16147.9	1066.1	107.1

Սպասարկման ոլորտ

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2015թ. կազմել է 50.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 19.5 %-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 78.0 մլրդ. դրամ նախորդ տարվա 41.1 մլրդ դրամի դիմաց կամ գրանցվել է 89.8 % աճ:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը կարևոր տեղ է զբաղեցնում Կոտայքի մարզի տնտեսության մեջ:

Մարզի զբոսաշրջության հիմնական կենտրոններն են՝ Ծաղկաձորի, Աղավնաձորի, Մարմարիկի, Հանքավանի, Աղվերանի, Արզնիի հանգստյան գոտիները, Գառնի, Գեղարդ, Բջնի պատմամշակութային վայրերը:

Մարզում գործում են մի շարք հյուրանոցային և հանգստի կազմակերպման համալիրներ (ավելի քան 60 հյուրանոց և հանգստյան տուն), ստեղծված են զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ընդ որում տարեցտարի ընդլայնվում է հյուրանոցային և հանգստի կազմակերպման համալիրների ցանցը:

Ընթացիկ տարում մարզ այցելած զբոսաշրջիկների թիվը կազմել է ավելի քան 221 հազար մարդ նախորդ տարվա 208 հազարի դիմաց կամ աճը կազմել է 6.3 %:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզպետարանի աշխատակազմի պահպանման համար նախատեսված 511.5 մլն դրամից ծախսվել է 509.1 մլն դրամ, մնացած 2.4 մլն դրամը տարբեր հոդվածներով կատարված տնտեսման արդյունք է: Փաստացի ծախսը 2014 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 26.4%-ով կամ մոտավորապես 110.6 մլն դրամով, որը հիմնականում աշխատավարձերի բարձրացման արդյունք է:

Ամբողջությամբ իրացվել են՝

- Հանրակրթական դպրոցների պահպանման համար նախատեսված 5 մլրդ 570 մլն դրամը:
- Մշակութային միջոցառումների անցկացման համար հատկացված 2.4 մլն դրամը:
- Ժող. գործիքների ուսուցման ծրագրով նախատեսված 67.4 մլն դրամը:
- Մարզային ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծրագրով հատկացված 85.0 մլն դրամը:
- Կրթական օբյեկտների հիմնանորոգման ծրագրով նախատեսված 126.1 մլն դրամը:

Ինչպես նաև ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 2015թ. հատկացված 602 մլն դրամը ծախսվել է ամբողջությամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի կողմից հաստատված ծրագրով մարզի 25 համայնքներում իրականացվել է ֆինանսական հսկողություն: Հսկողություն արդյունքում արձանագրվել է մի շարք թերություններ, բացթողումներ և խախտումներ: Այն շտկելու համար կազմվել է ժամանակացույց, առաջարկվել համայնքների ղեկավարներին խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառել կարգապահական տույժեր:

Չնայած սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 99% կամ նախատեսված 1 միլիարդ 849 մլն դրամի դիմաց հավաքագրվել է շուրջ 1 միլիարդ 831 մլն դրամի սեփական եկամուտ /հողի հարկ, գույքահար, տեղական տուրք, պետական տուրք և հողի ու գույքի վարձակալական վարձավճար/ սակայն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավել է հավաքագրվել շուրջ 41 մլն դրամ եկամուտ:

Գույքահարկի առաջադրանքը կատարվել է 101,5% -ով նախատեսված 1 մլրդ 90 մլն դրամի դիմաց հավաքագրվել է 1 մլրդ 74 մլն դրամ եկամուտ, կամ ավել է հավաքագրվել շուրջ 16 մլն դրամի սեփական եկամուտ: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավել է հավաքագրվել շուրջ 48 մլն դրամ գույքահարկ:

Գույքահարկի գծով ցածր ցուցանիշներ է արձանագրվել Ալափարս, Գառնի, Գողթ համայնքներում:

Հողի հարկի առաջադրանքը կատարվել է 94,7%-ով, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ պակաս է հավաքագրվել շուրջ 13 մլն դրամ:

Հողի հարկի գծով ցածր ցուցանիշներ է արձանագրվել Հրազդան, Ալափարս, Գողթ, Գառնի, Սևաբերդ համայնքներում:

Հողի և գույքի վարձակալական վճարների և տեղական տուրքերի տարեկան առաջադրանքը կատարվել է համապատասխանաբար 99.6%-ով և 98.3%-ով:

Այս հարկատեսակների գանձման ուղղությամբ ոչ բավարար աշխատանքներ են կատարել Մարմարիկ, Ալափարս, Կարենիս, Գառնի, Գողթ, Հատիս, Կապուտան, Ձորաղբյուր, Պտղնի և Ջրաբեր համայնքները:

Որոշակի աշխատանքներ են կատարվել ապառքների հաշվառման և դրանց գանձման ուղղությամբ:

Համայնքների բյուջեներում հիմնականում ապառքները գոյանում են հողի հարկից և գույքահարկից: Կազմվել է գույքահարկի և հողի հարկի ապառքների մարման ժամանակացույց և արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում գանձվել է շուրջ 162,1 մլն դրամ գույքահարկի ապառք և 38,2 մլն դրամի հողի հարկի ապառք:

Վերջին երեք տարիներին պետական բյուջեից համայնքներին հատկացված ֆինանսական համահարթեցման դոտացիաները անընդատ աճել են հասնելով 3 մլրդ 851 մլն դրամի, որը կազմում է համայնքների ընդհանուր եկամուտների ավելի քան 57,4 %-ը և նախորդ տարվա նկատմամբ դոտացիան ավել է շուրջ 485 մլն դրամով: Բացի դոտացիայից մի շարք համայնքներին ֆինանսական դեֆիցիտը լրացնելու համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 330 մլն դրամի դրամաշնորհ, որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի թանկացմամբ և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Մարզի համայնքները և ենթակա հիմնարկները 2015թ. աշխատավարձի և սոց.վճարների գծով պարտքեր չունեն:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունը հաշվետու տարում իր գործունեությունը կազմակերպել է մարզպետարանի և վարչության կանոնադրության, աշխատանքային ծրագրերի և տրված հանձնարարականների համաձայն:

2015 թվականին Աղավնաձոր, Բջնի, Գետարգել, Ձառ, Ողջաբերդ, Մրգաշեն, Ֆանտան համայնքներում անցկացվել են համայնքի ղեկավարի հերթական ընտրություններ, իսկ Աբովյանում արտահերթ, Աղավնաձոր համայնքում ավագանու արտահերթ ընտրություն:

Ընթացիկ տարում վարչության կողմից նախապատրաստվել են մարզպետի 41 որոշումների նախագծեր:

Վարչությունը մասնակցել է մարզպետարանի կողմից ՀՀ կառավարության մի շարք որոշումների նախագծերի քննարկմանը և ներկայացրել առաջարկություններ:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության նախաձեռնությամբ <<Հայաստանի համայնքների ասոցիացիա>> հասարակական կազմակերպության կողմից հունիս ամսին իրականացվել է 21 համայնքների ղեկավարների և 54 ավագանու անդամների վերապատրաստում:

Տեղական ինքնակառավարում

<u>Համայնքի ավագանու որոշումներ</u>

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի համաձայն մարզի համայնքներում 2015 թվականի ընթացքում կայացել է ավագանու 843 նիստ, որոնց ընթացքում կայացվել է 3451 որոշումներ:

Մարզպետարանի այլ ստորաբաժանումների հետ համատեղ կատարվել է ավագանու որոշումների իրավական հսկողություն, որոնց արդյունքներով ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ 351 գրություններ է ներկայացվել համայնքների ղեկավարներին: Ոչ իրավաչափ որոշումները համապատասխանեցվել են գործող օրենսդրության պահանջներին:

Համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներին և մասնագետներին պարբերաբար տրվել է մեթոդական խորհրդատվություն:

<u>Վարչական հսկողություն</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի <<Վարչական հսկողության 2015 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> N 282-Ա հրամանի համաձայն նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն՝ 2012-2015թթ. գործունեության նկատմամբ մարզի 25 համայնքների ղեկավարների և ավագանիների լիազորությունների նկատմամբ:

Հսկողության արձանագրությունները սահմանված կարգով տրվել են համայնքների ղեկավարներին և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Կատարվել են վարչական հսկողության արդյունքների քննարկումներ:

Համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների նկատմամբ իրականացվել է վերահսկողություն:

Վարչական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների շտկման նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվությունները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

<u>Առևտրի և ծառայությունների մատուցման բնագավառ</u>

2015թ. համայնքներում իրականացվել է առևտրի և ծառայությունների ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների իրականացման հսկողություն:

Համայնքների ղեկավարների կողմից մարզպետարան ներկայացված եռամսյակային հաշվետվություններն ամփոփվել են և կիսամյակի կտրվածքով ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Մարզի համայնքներում 2015թ. գործունեություն են իրականացրել 1436 առևտրի, 212 հանրային սննդի, 218 կենցաղային ծառայության օբյեկտներ: 2015թ. ընթացքում ստուգումներ են կատարվել 527 առևտրի, 112 հանրային սննդի, 28 կենցաղային ծառայության օբյեկտներում: Արձանագրվել է 20 խախտում, նշանակվել է 170 հազ դրամ տուգանք:

<u>Համայնքային ծառայություն</u>

Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով մարզի համայնքապետարանների աշխատակազմերում առկա համայնքային ծառայության 585 պաշտոններից դեկտեմբերի 30-ի դրությամբ զբաղեցված են 553-ը:

Թափուր է 32 հաստիք, որից 3-ը աշխատակազմերի քարտուղարների:

Համայնքային ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար 2015թ ընթացքում հայտարարվել է 65 մրցույթ, որոնց արդյունքներով պաշտոնի են նշանակվել 40 անձինք:

25 մրցույթներ չեն կայացել դիմորդներ չլինելու պատճառով:

Կոտայքի մարզում համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվել է և յուրաքանչյուր ամսին հաջորդող ամսի մինչև 5-ը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Համայնքապետարանների աշխատակազմերում առկա համայնքային ծառայության թափուր պաշտոններն օրենքով սահմանված մրցութային կարգով համալրելու նպատակով հայտարարված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորման օրերի ժամանակացույցերը յուրաքանչյուր տասնօրյակ ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, իսկ մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային կայքում:

Համայնքային ծառայողների հերթական վերապատրաստում են անցել մարզի 98 համայնքային ծառայողներ:

Հերթական ատեստավորում են անցել մարզի 141 համայնքային ծառայողներ:

Հանրապետական գործադիր մարմինների համակարգում

<u>Պաշտպանության բնագավառ</u>

2015 թվականի ամառային և ձմեռային զորակոչերը բարձր մակարդակով կազմակերպելու համար անցկացվել են խորհրդակցություններ՝ մարզային զորակոչային հանձնաժողովի, համայնքների ղեկավարների, զինվորական կոմիսարիատների, իրավապահ մարմինների և առողջապահության բնագավառի համապատասխան ներկայացուցիչների մասնակցությամբ: Կոտայքի մարզպետի կողմից կայացվել են 2015 թվականի ամառային և ձմեռային զորակոչերը կազմակերպելու և 2015 թվականին զորակոչային տեղամասերում կցագրում կատարելու մասին որոշումները:

2015 թվականի ամառային զորակոչը կատարվել է 104.0%-ով:

2015 թվականի սեպտեմբերի 3–ից 6-ը մարզը մասնակցել է «Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժանքին:

<u>Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառ</u>

Կոտայքի մարզային փրկարարական վարչության 2015 թվականի աշխատանքային ծրագրով և բնակչության պաշտպանության համակարգի հիմնական միջոցառումների պլանի համաձայն անցկացվել է 2 հրամանատարաշտաբային, 1 շտաբային, 1 ցուցադրական հատուկ տակտիկական, 30 շտաբային ուսումնավարժություն համայնքներում, 25 հատուկ տակտիկական ուսումնավարժություն և 14 օբյեկտային վարժանք:

<u>Ազգային անվտանգության բնագավառ</u>

Մարզուում իրականացվող կենտրոնական ու տեղական հասարակական-քաղաքական միջոցառումների նախաշեմին, հասարակական ու ազգային անվտանգության ապահովմանն ուղղված համատեղ միջոցառումները նպաստել են կանխատեսվող հասարակական-քաղաքական լարվածությունների կանխմանն ու իրադրության կայունացմանը:

Կանխատեսվող և իրականացված ահաբեկչական, դիվերսիոն ու վնասարարական ակցիաների իրավիճակներ մարզի տարածքում չի առաջացել:

Օրինախախտումների, պաշտոնական դիրքի չարաշահման, ֆինանսատնտեսական միջոցների ոչ նպատակային օգտագործման և այլ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի արդյունքում ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարզային վարչության կողմից բարձրացված խնդիրների լուծման

նկատմամբ մարզպետի և մարզային իշխանությունների կողմից դրսևորվել է հետևողականություն, ցուցաբերվել է օգնություն ու օժանդակություն:

Իրավապահ մարմինների բնագավառ

Իրավիճակային անհրաժեշտությունից ելնելով ՀՀ ոստիկանության տարածքային մարմիններին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին համակարգված և համագործակցված աշխատանքներ իրականացնելու նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Կոտայքի մարզային վարչության ենթակա բաժինների կողմից սպասարկվող վարչական տարածքներում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ կազմակերպվել է 47 հանդիպում (Հրազդան-4, Կոտայք–4, Նաիրի–36, Չարենցավան–3), իսկ համայնքներում ազգաբնակչության հետ՝ 209 հանդիպում (Հրազդան-65, Կոտայք–88, Նաիրի–24, Չարենցավան-32):

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ պահպանվել է պատշաճ հասարակական կարգ և անվտանգություն՝ ապահովելով ընտրությունների բնականոն ընթացքը:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է զենքի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 55 դեպք, նախորդ տարվա 49-ի դիմաց:

2015 թվականի ընթացքում արձանագրվել է բացահայտման տոկոսում հաշվվող հանցագործության 1469 դեպք (2014թ. 1536), որոնցից բացահայտվել են 1093-ը, բացահայտումը կազմել է 74.4%, նախորդ տարվա 79.0%-ի դիմաց:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի կողմից մարզի վարչական տարածքում 2015 թվականի ընթացքում ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը կազմել է 314 (2014թ. 307), ավելացել է 7-ով: Արձանագրվել է ճանապարհային երթևեկության կանոնների 52005 վարչական իրավախախտում (2014թ. 43343), նախորդ տարվա համեմատ ավել է հայտնաբերվել 8662 խախտում, որից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցներ վարելու պատճառով 460 խախտում (2014թ. 273), ավելացել է 187:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Կոտայքի տարածքային բաժանմունքներում 2015 թվականի ընթացքում հաշվառել են 7730 քաղաքացու, հաշվառումից հանել 2258 քաղաքացու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության անձնագրեր է տրվել 22725 քաղաքացիների:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 91 հանրակրթական ուսումնական հաստատություններ. 59-ը՝ միջնակարգ, 31-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/,

ԿԳ նախարարության ենթակայության 13 հանրակրթական ուսումնական հաստատություններ.

11 ավագ դպրոց, 2 կրթահամալիր /Աբովյանի և <<Փոքր Մհեր>> /,

6 պետական քոլեջ, 5 արհեստագործական ուսումնարան,

1 ոչ պետական դպրոց /Նոր Գեղիի/,

1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն /Հրազդանի հումանիտար ինստիտուտ/:

2015-2016 ուսումնական տարում մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում սովորում են 30345 աշակերտներ, իսկ ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ ուսումնական հաստատություններում՝ 4483 աշակերտներ:

Ընդամենը մարզի դպրոցներում սովորում են 34828 աշակերտներ /նախորդ ուսումնական տարվա ընթացքում սովորել են 33573 աշակերտներ/

Առաջին դասարան են հաճախում 3998 աշակերտ /նախորդ ուսումնական տարում հաճախել են 3640 աշակերտներ/:

Աբովյանի հատուկ /օժանդակ/ և Հրազդանի N11 հիմնական դպրոցի հատուկ ստորաբաժանումն ուսուցում է կազմակերպում մտավոր կամ ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող 67 աշակերտների համար: Տնային պայմաններում ուսուցում են ստանում 15 աշակերտներ, իսկ Աբովյանի տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնում սեպտեմբերից կրթություն են ստանում 11 երեխաներ:

Ներառական կրթություն են իրականացնում Հրազդանի N11, Աբովյանի N7, Չարենցավանի N6 հիմնական և Կոտայքի միջնակարգ դպրոցները և Աբովյանի կրթահամալիրում, աշակերտների թիվը այս պահին 77 է:

Մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են 2845 ուսուցիչներ:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններից հիմնանորոգված են 38-ը, մասնակի վերանորոգվել են 27-ը, իսկ մնացած 26-ը վերանորոգման կարիք ունեն:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 91 դպրոցներից 74-ը, իսկ 17-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով:

Մարզում գործում են 54 նախադպրոցական հաստատություններ, որոնցից 23-ը հիմնովին վերանորոգված են, 2-ի հիմնանորոգումը կավարտվի 2016 թվականին (Աղավնաձորի գյուղական համայնքի մանկապարտեզի շենքն ամբողջությամբ վերակառուցվում է):

Մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններ են հաճախում 7324 երեխաներ երեխաներ:

Մարզում գործում են 26 նախակրթարաններ, որոնք համապատասխան ծրագրի շրջանակներում ձևավորվել են հիմնականում այն համայնքներում, որտեղ նախադպրոցական հաստատություններ չկան կամ դրանք գերծանրաբեռնված են:

Մանկավարժական կադրերի թափուր աշխատատեղերը համալրվում են մրցութային կարգով:

Մարզպետարանի կողմից իրականացվում են համապատասխան գործառույթներ մրցութային գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու ուղղությամբ:

Մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններն ապահովված են համակարգիչներով ու ինտերնետ կապով և միացած են Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցին:

Մարզային ենթակայության բոլոր դպրոցներն աշխատում են <<Mulberry>> փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգով:

Մարզի 45 ուսումնական հաստատություններում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ներդրումային ծրագիրը՝ ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի <<Պարենի համաշխարհային ծրագիր>> համագործակցությամբ: Այս ծրագրի արդյունքում տարրական դասարանների աշակերտներն ապահովված են ամենօրյա տաք սննդով:

Մշակույթ

Մարզում գործում են 23 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 5 թանգարաններ, 2 թատրոններ, 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 67 գրադարաններ, 52 մշակույթի տներ և ակումբներ, 1 պատկերասրահ, 2 երաժշտական և 1 գեղարվեստի ստուդիաներ;

Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են 4155 աշակերտներ, աշխատում են 473 մանկավարժներ:

Տարվա ընթացքում մարզային մշակութային միջոցառումների տարեկան ծրագրի համաձայն կազմակերպվել և իրականացվել են ՀՀ տոներին և հիշատակի օրերին, ժամանակակից արվեստի զարգացմանը, ազգային ավանդույթների և ծեսերի պահպանմանը նվիրված միջոցառումներ՝ փառատոններ, մրցույթներ, ցուցահանդեսներ:

Ծավալուն միջոցառումներ են իրականացվել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի և Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ, որոնց շրջանակներում մարզի մի շարք համայնքներում տեղադրվել են խաչքարեր և հուշակոթողներ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի և ԼՂՀ Շահումյանի վարչական շրջանի միջև փոխհամագործակցության շրջանակներում կազմակերպվել է մարզի պատվիրակության այցելություն Քարվաճառ: Համերգային ծրագրով հանդես են եկել մարզի հայտնի երգիչները և պարային համույթները:

Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ սփյուռքի նախարարության սփյուռքահայ երիտասարդների <<Արի տուն>> ծրագրի իրականացմանը: Մարզում հյուրընկալվել են ավելի քան 80 սփյուռքահայ երիտասարդներ: Կազմակերպվել են հայ մշակույթի և արվեստի, հասարակական–քաղաքական ակնավոր գործիչների հոբելյաններին նվիրված <<Մեր մեծերը>> մի շարք միջոցառումներ՝ դասախոսություններ, զրույցներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, քննարկումներ, բաց դասեր:

Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ պետական և համայնքային միջոցների, ինչպես նաև նվիրատվությունների հաշվին մարզի 67 գրադարանների ֆոնդերը գեղարվեստական և գիտամասնագիտական գրականությամբ համալրելու ուղությամբ:

Հրազդանի քաղաքապետարանի դրամատիկական և Աբովյանի քաղաքապետարանի թատրոնները բեմադրել են նոր ներկայացումներ: Թատրոնները մասնակցել են մի շարք թատերական փառատոնների:

Մարզի և մայրաքաղաքի միջև առկա մշակութային համագործակցության ծրագրի համաձայն՝ դեկտեմբերի 22-26-ը Երևանի <<Հայ-Արտ>> մշակութային կենտրոնում կազմակերպվել է մարզի լավագույն գեղանկարիչների աշխատանքների ցուցահանդես:

Պատշաճ կերպով կազմակերպվել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո անցկացվող ասմունքի հանրապետական մանկապատանեկան 9-րդ մրցույթ-փառատոնի մարզային փուլը (հիշյալ մրցույթի անրապետական եզրափակիչ փուլում Սամվել Եղիազարյանը /Հրազդանի թիվ 8 դպրոց/ արժանացել է գլխավոր մրցանակի և պարգևատրվել ՀՀ վարչապետի շնորհակալագրով):

Հայաստանի ազգային կինոկենտրոնի հետ համատեղ <<Կինոաշուն>> ծրագրի շրջանակներում մարզի՝ Հրազդան, Չարենցավան և Ձովունի համայնքներում կազմակերպվել են հայկական հին ու նոր ֆիլմերի կինոդիտումներ: Կազմակերպվել են երաժշտական և արվեստի դպրոցների սաների, <<Կոտայք-2015>> պարարվեստի և երգարվեստի մարզային մրցույթ-փառատոններ, ցուցահանդեսներ:

Սահմանված կարգով ՀՀ մշակույթի և ՀՀ քաղաքաշինության նախարարաություններ են ներկայացվել 2016-2018թթ. ընթացքում մարզում վերանորոգման ենթակա մշակութային օջախների ցանկերը՝ ըստ առաջնահերթությունների:

Շարունակվել է մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների ուսուցման գծով ուսման վարձավճարի փոխհատուցման պետական ծրագրի իրականացումը: Մարզի 16 դպրոցներ 253 աշակերտի ուսուցման համար 2015 թվականին ստացել են 67484.2 մլն. դրամ:

Վերահսկվում է ընդունելության և ավարտական քննությունների ընթացքը, մշակվում և նախարարություն է ներկայացվում դպրոցների տարեկան հաշվետվությունները:

<u>Սպորտ</u>

Մարզում գործում են 15 մանկապատանեկան մարզադպրոցներ, որոնցից 2-ը մարզային ենթակայության, 2-ը՝ <<Սևան գյուղական մարզական ընկերության>>, 7-ը՝ համայնքային և 4-ը՝ հանրապետական ենթակայության: Մարզադպրոցներում գործում են խմբեր հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտ, բոնցքամարտ, ձյուդո, սամբո, ծանրամարտ, դահուկային սպորտ, շախմատ, ֆուտբոլ, հանդբոլ, արևելյան մարտարվեստ մարզաձևերից:

Մարզադպրոցներում և մարզական ակումբներում աշխատում են 132 մարզիչներ, պարապող սաների թիվը 5486 է: Տարվա ընթացքում մարզի բոլոր միջնակարգ և հիմնական դպրոցները ստացել են <<Շախմատ>> առարկայի դասավանդման համար անհրաժեշտ մեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, աշխատանքային տետրեր: Շարունակվել է շախմատ առարկայի ուսուցիչների վերապատրաստման և լիցենզավորման գործընթացը: Եղվարդ և Բյուրեղավան քաղաքներում բացվել են Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնաճյուղեր:

Մայիս ամսին շահագործման է հանձնվել Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոցի շենքը: Սեպտեմբերից մարզադպրոցը աշխատանքները իրականացնում է հարմարավետ և համապատասխան գույքով կահավորված շենքում: 13159.6 միլիոն դրամի սահմաններում մարզադպրոցի համար ձեռք է բերվել անհրաժեշտ մարզագույք և բժշկական սարքավորումներ:

Շարունակվում է Չարենցավանի համայնքային ենթակայության մանկապատանեկան մարզադպրոցի նոր շենքի կառուցումը:

Կազմակերպվել են բազմաթիվ մրցաշարեր՝ ՀՀ դպրոցականների 24-րդ մարզական խաղեր, ՀՀ <<Ազգային ժողովի գավաթի խաղարկության>> մրցումներ, ՀՀ դպրոցականների շախմատի օլիմպիադայի տարածաշրջանային և մարզային մրցումներ: Մարզպետի հովանու ներքո կազմակերպվել և անցկացվել են 2015թ. շախմատի պատանեկան և տղամարդկանց մարզային առաջնությունները:

Մարզի ութ համայնքներում մարզպետարանի համակարգմամբ անցկացվել են <<Մարզական փառատոներ>>, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր, մարզի նախադպրոցական կրթական հաստատություններում անցկացվել են սպորտլանդիաներ, իրականացվել են ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի, <<Լավագույն մարզական համայնք>>, <<Լավագույն մարզական բակ>> ստուգատեսերի համայնքային և մարզային փուլերը:

<<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի մարզային փուլին մասնակցել են 72, համայնքային փուլերին՝ 198 ընտանիքներ: Մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցել են հաշմանդամություն ունեցող 3 մարզական ընտանիքներ;

Մարզն ընդհանուր թիմային հաշվարկով գրավել է երրորդ տեղը՝ արժանանալով ՀՀ Նախագահի գավաթին:

ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթի հանրապետական փուլին մասնակցել են 8 մարզիկներ:

2015 թվականի օգոստոսին կայացած Համահայկական ամառային խաղերին մասնակցել են մարզի բոլոր յոթ քաղաքների պատվիրակությունները: Մեր մարզիկները նվաճել են 3 ոսկե, 1 արծաթե և 2 բրոնզե մեդալներ:

Հաշվետու տարում կարևոր ուշադրություն է դարձվել երիտասարդության խնդիրներին առնչվող մարզային նշանակության ծրագրերի մշակմանը և իրականացմանը: Կազմակերպվել է << Բազե Կոտայք >> մարզային երիտասարդական հավաք, որին մասնակցել են մարզի 30 համայնքները ներկայացնող 18-30 տարեկան ավելի քան 200 երիտասարդներ:

Մարզի Ծաղկաձոր համայնքը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից անցկացվող <<Լավագույն երիտասարդական մայրաքաղաք>> մրցույթի հանրապետական փուլում արժանացել է երկրորդ մրցանակի:

Տարվա ընթացքում երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են քննարկումներ Հայաստանի Հանրապետության <<Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության>> ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

2015թ. ընթացքում մարզի 4 սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում (ՍԱՏԳ) հաշվառվել են 12650 ընտանիքներ, որից նպաստառու են 9349 ընտանիքներ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 226-ով ավելի: Սոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությամբ հրատապ դրամական օգնություն է տրամադրվել 3081 ընտանիքի /նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 45-ով ավելի/, որոնց կարիքավորության միավորը 30.00-ից ցածր է եղել:

ԽՍՀՄ բանկերում ունեցած ավանդների փոխհատուցում է տրամադրվում մինչև 1931թ. դեկտեմբերի 31-ը ծնված անձանց և հաշմանդամ դարձած ազատամարտիկներին ու զինծառայողներին: Տարեսկզբից մինչև այժմ 193 ընտանիքի տրամադրվել է ավանդների փոխհատուցման գումար շուրջ 42 մլն.դրամ:

Ներկայումս Չարենցավան և Եղվարդ քաղաքներում նոր վերանորոգված մասնաշենքերում իրենց գործունեությունն են ծավալում ինտեգրված սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնները: Մեկ հարկի տակ են գտնվում սոցիալական ծառայություններ մատուցող 4 կազմակերպություններ՝ սոցիալական ծառայություն, կենսաթոշակային հիմնադրամ, զբաղվածության ծառայություն և բժշկա-սոցիալական փորձաքննության հանձնաժողովը, իսկ Հրազդան և Աբովյան քաղաքներում ինտեգրված սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ հիմնելու համար կատարվում են նախագծա-նախահաշվային աշխատանքներ:

Հաշվետու տարում զբաղվածության տարածքային 4 կենտրոններում գրանցվել է 7464 գործազուրկ, որից 5148-ը կանայք: Նախորդ տարվա հետ համեմատած զբաղվածության կենտրոններում գրանցվել են 801-ով ավելի գործազուրկներ: Աշխատանքի է տեղավորվել 1080 մարդ, նախորդ տարվա հետ համեմատած 106-ով պակաս:

2003-2015թ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի զոհված և հաշմանդամ դարձած 231 անապահով զինծառայողների ընտանիքներ: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2015 թվականին 4 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման համար տրամադրվել է ֆինանսական աջակցություն շուրջ 30 մլն.դրամ գումար:

Դեռևս բնակարանի բարելավման կարիք ունեն 237 զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ:

Մարզում գործում է <Առաքելություն Հայաստան> բարեգործական հասարակական կազմակերպությունը, որը միայնակ տարեցների և ծայրահեղ աղքատ ընտանիքների համար տրամադրում է անվճար սնունդ /175 շահառու/ և իրականացնում է սոցիալական սպասարկում /513 շահառու/:

Աբովյան քաղաքում գործում է <Սաթենիկ> բարեգործական հասարակական կազմակերպություն տուն-ինտերնատը, որի խնամքի տակ են 36 միայնակ տարեցներ:

ՀՀ պետական բյուջեով հաշվետու տարում մարզպետարանին հատկացված 30 մլն. դրամը տրամադրվել է մարզի շուրջ 1365 սոցիալապես անապահով ընտանիքների, որից 917-ը զոհված, անհայտ կորած և հաշմանդամ դարձաց ազատամարտիկներ, 105-ը <Հայրենական Մեծ պատերազմի> վետերաններ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարզի առողջապահական հաստատությունները ներկայացված են 40 ընկերություններով, որոնցից 35-ը 100 տոկոս պետական բաժնեմասով /բաժնետոմսերի կառավարման լիազորությունները տրված են ՀՀ Կոտայքի մարզպետին/՝ այդ թվում՝

4 բժշկական կենտրոն /Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Նաիրի/,

1ծննդատուն/Աբովյան/,

1 քաղաքային պոլիկլինիկա /Նոր Հաճն/,

1 մարզային արյան բանկ /Հրազդան/,

2 առողջության կենտրոն /Գառնի, Արգել/,

26 առողջության առաջնային պահպանման կենտրոններ, մնացած 5 ընկերությունների բաժնետոմսերը սեփականության իրավունքով անհատույց հանձնվել են համայնքներին /Մեղրաձոր, Բյուրեղավան, Բուժական, Լեռնանիստ, Առինջ/:

Մարզի առողջապահության համակարգի հիվանդանոցային ծառայության մահճակալային ֆոնդը 253 է, որից

Թերապևտիկ պրոֆիլի՝ 73,

Վիրաբուժական՝ 58,

Ինֆեկցիոն՝ 22,

Մանկաբարձագինեկոլոգիական՝ 94,

Վերակենդանացման՝ 6:

Առողջապահական համակարգում աշխատողների թիվը 2015 թվականի տարեվերջին կազմել է 1660, որից բժիշկներ՝ 403, միջին բուժանձնակազմ՝ 792:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մարզի առողջապահական ընկերությունների ֆինանսավորման հաստատված ծավալը 2015 թվականին կազմել է 3 մլրդ 200 մլն 800 հազ դրամ (2014թ. 2 մլրդ 808 մլն դրամ), որից արտահիվանդանոցային ծառայությունների ծրագրերով՝ 1 մլրդ 986 մլն դրամ (2014թ. 1 մլրդ 707 մլն

դրամ) և հիվանդանոցային ծառայությունների ծրագրերով 1 մլրդ 212 մլն դրամ (2014թ.1 մլրդ 101 մլն դրամ):

2015 թվականի ընթացքում մարզի բուժհաստատություններում հիվանդանոցային բուժօգնություն են ստացել 11881 անձինք (2014թ.-12507), որոնցից 9979-ը պետական պատվերի շրջանակներում և 1854-ը վճարովի սկզբունքներով:

Հաշվետու ժամանակաշրջանում շաքարային դիաբետ, էպիլեպսիա, պարբերական հիվանդություն և հոգեկան հիվանդություններով տառապող անձանց կենտրոնացված կարգով տրամադրվել է շուրջ 68մլն. դրամի (2014թ.-71մլն դրամ) և հումանիտար օգնության 9.3 մլն ՀՀ դրամի դեղորայք (2014թ.՝ 24 մլն դրամ):

Ընթացիկ տարում մարզի ծննդատներում գրանցվել է 2498 ծնունդ (2014թ՝ 2641 ծնունդ):

2015 թվականի տարեվերջին մարզի առողջապահական ընկերությունները դեբետորական և կրեդիտորական պարտքեր չունեն, աշխատավարձի պարտքեր չեն գոյացել:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Կոտայքի մարզի և ԼՂՀ Շահումյանի շրջանի միջև փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում մարզի առաջատար բժիշկ-մասնագետների կողմից կազմակերպվել է հիվանդանոցային բուժման կարիք ունեցող անձանց անվճար բուժումը և հղիների ծննդալուծումը մարզի բուժհաստատություններում: Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող, սակայն ՀՀ Կոտայքի մարզում մշտապես/փաստացի բնակվող կանանց սահմանված կարգին համաձայն տրամադրվել է ծննդօգնության հավաստագրեր: Մարզից դուրս մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար մարզպետի միջնորդությամբ ուղեգրումների թիվը կազմել է 15 (2014թ.՝ 11):

Հաշվետու տարում անվճար հիվանդանոցային բուժման նպատակով տրամադրվել է մարզպետի 58 ուղեգիր (2014թ.՝ 39), ԼՂՀ-ի կամ այլ երկրի հայազգի քաղաքացիների մարզպետի միջնորդագրերով տրամադրվել է 8 հավաստագիր (2014թ.՝ 23): 2015թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով հաստատված բաշխացուցակի համաձայն պետության կողմից երաշխավորված առողջարանային-վերականգնողական բուժում են ստացել 145 անձիք:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի 6-րդ հրատապ ծրագրի շրջանակներում Աբովյանի բժշկական կենտրոնի հիմնանորոգման համար հատկացվել է 150 մլն դրամ, ևս 42մլն դրամ տրամադրվել է Աբովյանի բժշկական կենտրոնի սեփական միջոցներից, իսկ Գառնիի առողջության կենտրոնի մասնակի հիմնանորոգման համար տրամադրվել է 20 մլն դրամ:

2015 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից մարզպետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների գործադիր տնօրենների թափուր պաշտոնների համար սահմանված կարգի համաձայն անցկացվել են մրցույթներ: Առկա են տնօրենի 11 թափուր պաշտոններ, կայացել է տնօրենի ընտրության 1 մրցույթ: Նշանակվել է 1 տնօրեն (Աբովյանի ծննդատուն):

Ընկերություններում բժշկական կադրերով ապահովումը նույնպես իրականացվել է մրցութային կարգով: Ընթացիկ տարում հայտարարված մրցույթների արդյունքում համակարգը համալրվել է երիտասարդ մասնագետներով:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարվա ընթացքում զգալի աշխատանք է իրականացվել ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառներում դրական զարգացումներ ապահովելու նկատառումներով:

Առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ և վերջիններիս թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 112 երեխաներ (ծնողազուրկ՝ 79, ԱԾԽՄ թվին պատկանող անձինք՝ 33):

Մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքներից ստացված տվյալների հիման վրա հաշվետու տարում հաշվառվել են 50 իրավախախտ անչափահասներ, հաշվառումից հանվել՝ 41-ը, այժմ հաշվառման մեջ են գտնվում 38 իրավախախտ անչափահասներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակազմի կողմից տրված եզրակացությունների հիման վրա մանկատուն է տեղավորվել 6 երեխա, մանկատնից կենսաբանական ընտանիք է վերադարձվել 3 երեխա:

Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման, ներառական կրթության համակարգ ընդգրկելու և նրանց կարիքի գնահատման առումով: 2015թ. ընթացքում մարզում վկայագրվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 149 երեխաներ:

2015թ. <<Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ-ներ են տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքների 10 երեխաներ, նրանց տրվել են համապատասխան եզրակացություններ, կարիքների գնահատման հիման վրա կազմվել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրեր, իսկ 18 երեխաներ համապատասխան եզրակացությունների հիման վրա դուրս են գրվել խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններից:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ 2015թ. ընթացքում մուտքագրվել են 102 երեխաների և երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների տվյալներ՝ այդ թվում 93 երեխաներ (որդեգրման ենթակա՝ 11-ը), և երեխա որդեգրել ցանկացող 9 քաղաքացիներ:

Երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների կենսապայմանների ուսումնասիրման նպատակով կատարվել են տունայցեր, կազմվել են համապատասխան ակտեր, որոնց հիման վրա տրվել են դրական եզրակացություններ:

Երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններ՝ ՀՕՖ-ի <<Երեխաների աջակցության հիմնադրամ>> կենտրոն 2015թ. ընթացքում տեղավորվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 12 երեխաներ, իսկ Երևանի <<Ջատիկ>> երեխաների աջակցության կենտրոն՝ 9 երեխաներ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2015թ. հողային հաշվեկշռի համաձայն մարզում առկա են 154.62 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, որոնք կազմում են հանրապետության նմանատիպ հողերի 7.9 տոկոսը, այդ թվում՝ վարելահողեր՝ 37.8 հազար հա, բազմամյա տնկարկներ՝ 2.8 հազար հա, խոտհարքներ՝ 11.26 հազար հա, արոտներ՝ 79.0 հազար հա: Նշված հողատարածքներից պետական և համայնքային

սեփականություն են համարվում 7.79 հազար հա վարելահողերը, 2.9 հազար հա խոտհարքները, 82.6 հա բազմամյա տնկարկները և 76.0 հազար հա արոտավայրերը:

Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով մեր կողմից ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի 25 համայնքներում: Միաժամանակ՝ ս/թ մայիս-հունիս ամիսներին մարզպետարանի հողաշինության բաժնում տեսչական ստուգումներ են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից, որի արդյունքում բաժնի աշխատանքներում թերություններ և խախտումներ չեն հայտնաբերվել:

Համադրման նպատակով տեսչությունը ուսումնասիրություններ է իրականացրել մարզի թվով 16 համայնքներում, որի արդյունքում՝ հողային օրենսդրության տարաբնույթ խախտումների համար մարզի Կամարիս, Գեղադիր, Ակունք և Բջնի համայնքների ղեկավարները մարզպետի համապատասխան որոշումներով ենթարկվել են վարչական տույժերի:

2015թ. ընթացքում ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն մարզային համապատասխան հանձնաժողովում համայնքների ղեկավարների մասնակցությամբ քննարկվել և համաձայնեցվել են մարզի 19 համայնքներում գտնվող թվով 25 հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման վերաբերյալ կազմված հողաշինարարական գործերը և դրանք սահմանված կարգով ներկայացվել են միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

Միջգերատեսչական հանձնաժողով ներկայացված գործերից 22-ի վերաբերյալ ստացված դրական եզրակացությունները ուղարկվել են համապատասխան համայնքների ղեկավարներին՝ դրանց համապատասխան ընթացք տալու համար:

Նույն ժամանակահատվածում ՀՀ Կառավարության 30.07.1998թ. թիվ 479 և 23.07.2015թ. թիվ 828 որոշումների սահմանված կարգով մարզի 18 համայնքներից ստացված թվով 38 միավոր հողամասերի գործառնական նշանակության փոփոխության առաջարկություններ ուսումնասիրվել են և դրանց տրվել են մարզպեի համապատասխան համաձայնությունները:

2015թ. ընթացքում ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն մարզային համապատասխան հանձնաժողովում քննարկվել են մարզի Եղվարդ և Սոլակ համայնքներում գտնվող 3 միավոր գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերը ավելի ցածր արժեքի հողատեսքի փոխանցելու վերաբերյալ առաջարկությունը և բոլորի վերաբերյալ տչրվել է դրական եզրակացություն:

Մարզային հողային պետական տեսչության առաջնահերթ նպատակն ենք համարում հողային օրենսդրության պահանջների խախտումների կանխարգելումը, համայնքների ղեկավարներին մեթոդական աջակցություն ցուցաբերելը, ինչպես նաև հայտնաբերված խախտումների նկատմամբ խիստ վերաբերմունք դրսևորելը:

2015թ. ընթացքում բաժինը ստացել և սահմանված կարգով ընթացք է տրվել 894 գրությունների և նամակների, որից թվով 46-ը քաղաքացիներից ստացված դիմումներ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզում ձևավորվել և գործում են 32479 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Մարզի հողային հաշվեկշիռը հետևյալն է՝ գյուղ. նշանակության հողեր՝ 154622.1 հեկտար, այդ թվում վարելահողեր՝ 37750.4 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 2779.6 հեկտար, խոտհարք՝ 11257.0 հեկտար, արոտներ՝ 78922.0 հեկտար այլ հողտեսքեր՝ 23843.1 հեկտար:

2015թ. բերքի տակ կատարվել է 18020 հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք /որից աշնանացան- 6144 հա, գարնանացան- 11876 հա/ կամ օգտագործվել է վարելահողերի 47.7 տոկոսը, նախորդ տարվա 45.1 տոկոսի դիմաց:

Նախորդ տարվա համեմատ ընդհանուր ցանքատարածությունները ավելացել են 959 հեկտարով:

Հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2014-2015թթ.

գ/տ մշակաբույսեր	տարածությունը հա			
	2015թ	2014թ	2015թ. 2014թ-ի նկատմամբ +/-	2015թ. 2014թ-ի նկատմամբ %
ընդամենը մարզում *այդ թվում՝*	1820	17061	+959	105.6
Հացահատիկ և ընդեղեն	12618.7	11728	890.7	107.6
կարտոֆիլ	850	828	+22	103.0
բանջար	1164	1153	+17	101.1
տեխ. մշակաբույսեր	49	49	0	100.0
կերային մշակաբույսեր	3300	3303	-3	99.9

Եթե բնութագրենք գյուղատնտեսական տարին, ապա այն կարելի է համարել բանրենպաստ մասնավորապես պտղի և հացահատիկի արտադրության բնագավառառում: Հաշվետու տարում ցանքատարածությունների աճին զուգընթաց արձանագրվել է հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության աճ /2015թ.-ի մարզում ստացված համախառն բերքն ու համեմատականը նախորդ տարվա ցուցանիշների հետ բերված աղյուսակում/:

Հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը /2014-2015թթ/

Հ/h	Գյուղատնտես. մշակաբույսեր	Միջին բերքը /գ/հա/			Համախառն բերքը /տոննա/			2015թ. 2014թ. նկատմամբ /տոկոս/
		2014թ.	2015թ.	+ -	2014թ.	2015թ.	+ -	
	հացահատիկ, այդ թվում՝	23.8	26.2	+2.4	27539.1	32503.0	+4963.9	118.0
	աշնանացան ցորեն	24.9	26.9	+3.0	14189.7	16500.0	+2310.3	116.3
	գանրանացան գարի	23.3	25.7	+2.4	6328.8	8313.8	+1985.0	128.5
	հաճար	22.3	25.4	+3.1	5918.8	6975.6	+1056.8	117.8
	Հատիկաընդեղ.	26.0	27.5	+1.5	417.2	597.1	+179.9	143.1
	կարտոֆիլ	202.0	222.8	+20.8	16781.8	18939.6	+2157.8	112.8
	բանջարեղեն	194.4	196.0	+1.6	22418.2	22819.2	+401.0	102.7
	պտուղ	35.4	47.5	+12.1	14164.4	19161.5	+2997.1	135.2
	խաղող	21.9	51.2	+29.3	350.0	819.2	+469.2	234.0
	կուտակվել է խոտ	-	-	-	44963.0	56894.0	+11931	126.5

2015թ.-ի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 559 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 60.0 տ. գարնանացան գարու, 1.7 տ. առվույտի, 37.0 տ. կորնգանի և 150 կգ եգիպտացորենի սեր-

մացուներ, որոնցով կատարվել է համապատասխանաբար 300 հա գարու, 68.0 հա առվույտի, 247 հա կորնգանի, 6 հա եգիպտացորենի ցանք (պահանջարկը բավարարվել է):

Պետական աջակցության ծրագրերով,2015թ.-ին մարզին հատկացվել և ներկրվել է.

- ազոտական պարարտանյութ – 1695 տոննա (ներկրվել է 1642 տոննա – հավաքագրվել է 197.0 մլն դրամ, պարտք չկա)
- կալիումական պարարտանյութ – 60 տոննա (ներկրվել է 41 տոննա – հավաքագրվել է 5.7 մլն դրամ, պարտք չկա)
- ֆոսֆորական պարարտանյութ – 85 տոննա (ներկրվել է 35 տոննա – հավաքագրվել է 4.9 մլն դրամ, պարտք չկա)
- դիզելային վառելանյութ – 312000 լիտր դիզ. վառելանյութ (ներկրվել է 131765 լիտր, պարտք չկա):

Գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է, ծրագրից օգտվել են մարզի 55 համայնքների շուրջ 6200 շահառուներ:

2015թ.-ին ՀՀ կառավարության կողմից մարզի 2 համայնքների /Քաղսի, Զորավան/շուրջ 90 սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվեց օժանդակություն՝ անվճար սերմացուի տեսքով 8,773 տոննա գարնանացան գարու և 696 կգ առվույտի սերմացու:

Աշնանը ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան ծառայությունների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում մարզի 7 համայնքների հատկացվել է 90 կգ <<Ռոդիֆակում- Ս >> մկնասպան թունանյութ, որով բազմամյա տնկարքներում 1125 հա-ի վրա կատարվել են պայքարի աշխատանքներ մկնանման կրծողների դեմ /Եղվարդ- 150 հա, Նոր Գեղի- 355 հա, Մրգաշեն- 120 հա, Նոր Արտամետ- 100հա, Թեղենիք- 30 հա, Արագյուղ- 350 հա, Սարալանջ- 20 հա/:

2015 թվականի աշնանացանի ցանք կատարելու համար ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1001-Ն որոշմամբ մարզին հատկացվել է ՌԴ-ից ներկրված 174.2 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը հատկացվել է մարզի 26 համայնքերի 451 շահառուների, կատարվել է 580 հա աշնանացանի ցանք, ընդհանուր առմամբ կատարվել է 6640 հեկտար աշնանացանի ցանք, նախորդ տարվա 6144 հեկտարի դիմաց / ավել է կատարվել 496 հա/:

Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 8.6%-ը (59.4 հազար գլուխ խ.ե.կ., որից 26.9 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ 6.1%-ը (45.2 հազար գլուխ) և խոզերի՝ 10.4%-ը (14.8 հազար գլուխ):

Մարզում 2015թ.-ի ընթացքում իրացվել է շուրջ 16.2 հազար տոննա (կենդանի զանգվածով) միս արտադրվել է 66.9 հազար տոննա կաթ և 124.9 մլն հատ ձու, համապատասխանաբար նախորդ տարվա 15.3 հազար տոննա մսի, 64.8 հազար տոննա կաթի, 127.7 մլն հատ ձվի դիմաց:

Լուրջ առաջընթաց կա մարզում գործող անասնապահական մթերքների արտադրության վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեության բնագավառում, որոնց տեխնիկական հագեցվածությունը տարեց- տարի ավելանում և համապատասխանեցվում է միջազգային ստանդարտներին: Արտադրանքի աճի հետ մեկտեղ զգալի աշխատանքներ են տարվել որակյալ և մրցունակ ապրանքների արտադրության ուղղությամբ, որի ընթացքում մի շարք ընկերությունների որոշ ապրանքատեսակներ արտահանվում և հաջողությամբ իրացվում են արտերկրում:

Մարզում դրական տեղաշարժերից առանձապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի արտադրության ավելացումը ընդհանուր առմամբ ջերմոցների քանակը, 2015 թվականին այն կազմել է 58.5 հա որից բանջարեղենի արտադրության տակ 38 հա, իսկ մնացածը ծաղկի: /Գողթ, Արամուս, Ակունք, Նոր Գեղի/:

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում նախատեսվում է Կոտայքի մարզից ընդգրկել 12 համայնք: Նախատեսված 12 համայնքից 4-ում *(Սոլակ, Լեռնանիստ, Ակունք, Գեղաշեն)* արդեն իսկ մեկնարկել են երկրորդ ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Չորս համայնքի կողմից նախնական ներկայացված կառավարման պլանների համաձայն նախատեսվում է՝

- կառուցել 19.4կմ ջրարբիացման համակարգ, տեղադրել 15 հատ խմոց, որով կջրարբիացվի ավելի քան 7,500 հա արոտ: Նշված բոլոր շինարարական աշխատանքները գտնվում են նախագծման փուլում, որոնց մոտավոր ընդհանուր արժեքը կկազմի շուրջ 305 մլն դրամ:

- լրացուցիչ խոտի արտադրման նպատակով համայնքներում ստեղծված կոոպերատիվներին՝ իրենց կողմից մշակված անասնապահության զարգացման կառավարման պլանի համաձայն, կտրամադրվի 48 միավոր գյուղտեխնիկա, որից 6 միավոր տրակտոր և 42 միավոր այլ գյուղգործիքներ: Նախատեսված գյուղտեխնիկայի ընդհանուր արժեքը կկազմի շուրջ 150 մլն դրամ*:*

Ջրարբիացման համակարգերի կառուցման արդյունքում լիարժեք օգտագործելի կդառնան ոչ միայն նախկինում մասնակիորեն օգտագործվող շուրջ 2,500 հա արոտներ, այլև կենդանիների խմելու ջրի բացակայության պատճառով ընդհանրապես չօգտագործվող շուրջ 4,500 հա արոտավայրեր՝ յուրաքանչյուր հա-ից միջին հաշվարկով ստանալով 1.6 տոննա խոտի չոր զանգված՝ համաձայն ընդհանուր կերարտադրության դրույթների և անասնաբուծական նորմատիվների: Արդյունքում՝ նշված տարածքից կապահովի շուրջ 2,952 տոննա կերամիավոր, որից ստացվում է մոտ 3,690 տոննա կաթ՝ շուրջ 405.9 մլն դրամ կամ 492 տոննա քաշաճ (միս)՝ շուրջ 492 մլն դրամի:

Կոոպերատիվներին գյուղտեխնիկայի տրամադրման արդյունքում՝ խոտհարքներից մսուրային շրջանի համար կհավաքվի տարեկան հավելյալ շուրջ 900 տոննա չոր խոտ, որը համարժեք է 369 տոննա կերամիավորի, որից ստացվում է մոտ 461 տոննա կաթ՝ շուրջ 69.2 մլն դրամ կամ 62 տոննա քաշաճ (միս)՝ շուրջ 62 մլն դրամի:

Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքում նախատեսվում է ունենալ կաթնատվության և անասնագլխաքանակի վաճառքի շուրջ 20% աճ:

Մարզի 4 համայնքում անասնապահության զարգացման համար հատկացված բյուջեն կազմում է 455 մլն դրամ, որից 305 մլն դրամ ջրարբիացման համակարգի կառուցման և 150 մլն դրամ գյուղտեխնիկայի տրամադրման նպատակով (այդ համայնքներում անասնապահությամբ զբաղվող ծրագրի շահառուների թիվը կազմում է շուրջ 1005 ֆերմերային տնտեսություն):

Չնայած մարզում հաշվառված է 826 տրակտոր, 83 հացահատիկահավաք կոմբայն, 351 տրակտորային կցասայլ, 120 տրակտորային խոտհնձիչ, 32 կերահավաք կոմբայն, 133 հավաքիչ-մամլիչ և այլ գյուղատնտեսական տեխնիկա, սակայն դրանց սարքինության մակարդակը՝ միջինը կազմում է շուրջ 85.5%՝ հանրապետական միջինի՝ 82.5%-ի համեմատ*:*

«ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման ու հավաքակազմի աստիճանաբար նորացման աշխատանքների իրականացում» ՀՀ կառավարության 2013թ.-ի գերակա խնդրի լուծման շրջանակներում 13.06.2013թ. թիվ 588-Ն և 20.06.2013թ. թիվ 650-Ն որոշումների հիման վրա Բելառուսի Հանրապետությունից մարզ է ներկրվել «Բելառուս 82.1» մակնիշի տրակտորներ, որոնց իրացումն իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը (լիզինգային եղանակով): 2014թ.-ին ձեռք է բերվել 2 անիվավոր տրակտոր և 12 գյուղգործիք:

2016թ. գյուղատնտեսական տարվա նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով մարզի բոլոր համայնքներից հավաքագրվել են հայտեր /պարարտանյութերի, սերմացուների և դիզ. վառելիքի / պահանջարկի վերաբերյալ, որն ամփոփ ձևով ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Նախատեսվում է կատարել 12400 հա գարնանացան

մշակաբույսերի ցանք, որը ավել կլինի նախորդ տարվանից 147 հա-ով: 2015 թվականին մարզ ներկրված պարարտանյութերի, սերմերի և դիզ.վառելիքի գումարները ամբողջությամբ հավաքագրվել և մուծվել է մատակարարների հաշվարկային հաշվեհամարներին:

Բնապահպանություն

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ բազալտի, լիթոիդային պեմզայի, մարմարի, գրանիտի, հրաբխային խարամի, ոսկու հանքավայրերով: 2015 թվականի դրությամբ մարզում տրվել են 60 հանքավայրերի շահագործման թույլտվություններ, որոնք պատկանում են 47 տնտեսվարող սուբյեկտների և գտնվում են 20 համայքների վարչական տարածքներում: Դրանցից տարվա ընթացքում շահագործվել են 32-ը, 10-ը չեն շահագործվում պահանջարկ և հնարավորություններ չունենալու պատճառով, իսկ մնացածը գտնվում են փաստաթղթային ձևակերպումների փուլում:

Քիչ չեն նաև քաղցրահամ ջրերի /Կաթնաղբյուր, Գառնի, Արզական, Մաքրավան,Գյումուշ, Ալափարս, Նուռնուս/ աղբյուրները, որոնցից օգտվում են ինչպես մարզի բնակավայրերը, այնպես էլ Երևան քաղաքը: Ըստ գույքագրման տվյալների մարզում առկա են 440 բնաղբյուրներ և 200-ից ավելի խորքային հորեր: Կոտայքի մարզում անտառները զբաղեցնում են տարածքի շուրջ 11 տոկոսը / 22761 հա/, որը համեմատական է հանրապետության միջինին:

Դրանք ունեն հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում հարուստ կենսաբազմազանությամբ:

Մարզի անտառտնտեսությունը լուրջ բարեփոխումների կարիք ունի: Պետական բյուջեյից տրվող սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս բավարար մակարդակով օգտագործելու անտառը:

2015 թվականի աշնանային ժամանակահատվածում պետ բյուջեի միջոցներով Հրազդանի անտառային տարածքներում 100 հա-ի վրա իրականացվել է բնաշվային վերաճի օժանդակման աշխատանքներ, որը էականորեն կնպաստի նախկինում հատված տարածքներում անտառի արագ վերականգնմանը: Վերջին տարիներին իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ կտրուկ նվազել են ապօրինի անտառխախտման դեպքերը: 2015թվականի ընթացքում գրանցվել է ապօրինի ծառահատման ընդամենը 3 դեպք: Բնապահպանական առումով մարզում առաջնային խնդիր են մնում թափոնների տեղադրման, աղբահանության և աղբավայրերի չկանոնակարգված օգտագործման, ինչպես նաև միջպետական և հանրապետական ճանապարհամերձ տարածքներում սանիտարական մաքրման հարցերը: Մարզում կան 4 խոշոր աղբավայրեր, որոնք շահագործվում են Հրազդան, Աբովյան, Եղվարդ, Չարենցավան համայնքների կողմից: Կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրները բացասական ազդեցություն են թողնում ինչպես բնակավայրերի էկոլոգիական վիճակի, այնպես էլ մարզի ռեկրացիոն գրավչության վրա:

2014 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրված համաձայնագրով, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ծրագրով նախատեսվում է Հայաստանում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան առաջին տարածաշրջանային աղբավայրը, որը տեղակայված կլինի մարզի Հրազդան քաղաքի վարչական տարածքում: Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 8 .0 7 մլն. Եվրո, որի աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2016 թվականից: Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը կենցաղային կեղտաջրերն են, անհրաժեշտ է, որ տուրիզմի զարգացմանը զուգընթաց ապահովել կեղտաջրերի մաքրման կենսաբանական ինքնավար / լոկալ/ համակարգերի կիրառումը և մարզի ու համայնքների զարգացման պլաններում դրանց կառուցման համար համապատասխան միջոցներ նախատեսել:

Ջրերի էկոլոգիական պահպանության առաջնահերթ խնդիրներից է մնում կեղտաջրերի մաքրման և հեռացման աշխատանքների կազմակերպումը: Մարզում մաքրման կայանների բացակայության և կոյուղատարների վթարների հետևանքով կեղտաջրերը լցվում են Դալար, Ծաղկաձոր, Մարմարիկ, Հրազդան գետերը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

Քաղաքաշինության բնագավառ

2015 թվականին պետական բյուջեից ՀՀ Կոտայքի մարզպետարանին հիմնանորոգվող երկու կրթական օբյեկտների համար հատկացվեց 122.0 մլն դրամ գումար, որից 60.0 մլն դրամ Աբովյանի N 2 դպրոցին և 62.218 մլն դրամ շարունակական Չարենցավանի N 4 դպրոցին:

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ իրականացվող շարունակական հիմնանորոգվող կրթական օբյեկտ՝ Աբովյանի N 5 դպրոցին հատկացվեց 44.3 մլն դրամ և շարունակական հիմնանորոգվող մարզական օբյեկտ՝ Չարենցավանի մարզադպրոցին հատկացվեց 255.2 մլն դրամ:

Պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 766-Ն որոշման համաձայն Կոտայքի մարզպետարանին մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջվող V1 հրատապ ծրագրերի իրականացման համար, (առողջապահական և կրթական օբյեկտների հիմնանորոգման, ճանապարհների ասֆալտապատման,համայնքներում ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում և համայնքային կենտրոնի հիմնանորոգման) հատկացվեց ընդհանուր 468.0 մլն դրամ, այդ թվում նախագծանախահաշվային աշխատանքների համար 6.50 մլն դրամ:

Մրցույթի արդյունքում տնտեսվեց 13.1 մլն դրամ գումար, որով լրացուցիչ իրականացվեցին 4 կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ:

2015 թվականին մարզպետարանի պատվիրատվությամբ վերանորոգվեց 2 առողջապահական օբյեկտներ, 8 կրթական օբյեկտներ,8 համայնքներում կատարվեցին ասֆալտապատման աշխատանքներ և 3 համայնքներում ջրամատակարարման աշխատանքներ, որոնց իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը Կոտայքի մարզպետարանին բոլոր ծրագրերով վերցրած ընդհանուր հատկացրել է 590.0 մլն դրամ:

Կատարված աշխատանքների համառոտագիրը

Հ/Հ	Բովանդակություն	Քանակ
1	Մարզպետարան իրազեկված շինարարության թույլտվություն.	581
	այդ թվում -անհատական բնակելի տներ	177
	-հասարակական սպասարկման օբյեկտներ	57
	-այլ օբյեկտներ /տնտ.շինություններ, ավտոտնակ,պահեստ,պարիսպ,հանգստի գոտի/	347

Մարզի տարածքում կատարված աշխատանքների ընթացքը նախորդ տարվա համեմատությամբ երևում է հետևյալ աղյուսակում

Հ/Հ	Անվանում	2014թվ.	2015 թվ.
1.	Մարզպետարան իրազեկված շինարարության թույլտվություններ	495	581
2.	Շինարարության ավարտի փաստագրման ավարտական ակտ	164	106
3.	Շինարարության քանդման թույլտվություններ	9	10

2015 թվականի ընթացքում վարչությանը հասցեագրվել է 1470 գրություններ և 101 դիմում բողոքներ, որոնց տրվել է համապատասխան ընթացք

Անվանում	2014թ.	2015թ.
Գրություններ	1615	1470
Դիմում-բողոքներ	76	101

<u>Քաղաքաշինության</u> ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից կարևորվում են հետևյալները.

-մարզի գյուղական համայնքների զգալի մասը չունեն գլխավոր կամ պարզեցված հատակագծեր:

Առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրներից է մարզի 45 համայնքների գլխավոր հատակագծերի մշակումը:

<u>Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բնագավառ</u>

2015 թվականի ընթացքում մշտապես աշխատանքներ են տարվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի, <<Երևան Ջուր>> ՓԲԸ-ի և համայնքների հետ՝մարզի ջրամատակարարման համակարգում առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ:

<<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին <<Ասիական զարգացման>> բանկի վարկի միջոցներով մարզի՝ Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Ծաղկաձոր, Սոլակ, Քաղսի և Ակունք համայնքների ջրամատակարարման համակարգերում իրականացվել է 551.3 մլն դրամի աշխատանքներ:

<<Երևան Ջուր>> ՓԲԸ-ի կողմից Նոր Գեղի, Գառնի, Կարենիս, Առինջ և Պտղնի համայնքներում իրականմացվել է 180.5 մլն.դրամի աշխատանքներ, իսկ 152.1 մյն.դրամի աշխատանքները ընթացքի մեջ են:

Ընթացքի մեջ է Հրազդան քաղաքում մարզային նշանակության կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կառուցման ծրագիրը: Ներկա պահին իրականացվում է պայմանագրերի փոփոխության գործընթացը, և ծրագրի մեջ ընդգրկվելու են նաև Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ քաղաքային համայնքները:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2015 թվականին՝ ընդհանուրը 39,4 մլն դրամով կատարվել է մարզի Աղավնաձոր և Արամուս համայնքների ջրամատակարարման համակարգի և Ձրվեժ համայնքի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները:

<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին Արգել,Գառնի, Ակունք համայնքներում իրականացվել է շուրջ 6150 գծ.մ գազի խողովակաշարի վերատեղադրում և թվով 3 ԳԿԿ-ների շինությունների կապիտալ վերանորոգում:

2015 թվականին մարզի համայնքների կողմից բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Բազմաբնակարան շենքերի սպասարկում և պահպանում՝ Չարենցավան, Ծաղկաձոր, Աբովյան, Բյուրեղավան համայնքներում – 36,9 մլն դրամ,

- Ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում Եղվարդ, Աղավնաձոր, Հանքավան, Ձորաղբյուր, Նոր Երզնկա և Ջրվեժ համայնքներում կատարվել են 51.4 մլն դրամի աշխատանքներ:

- Իրականացվել է Ծաղկաձոր, Հանքավան, Ջրվեժ, Առինջ, Ջովաշեն, Թեղենիք համայնքներիում իրականացվել է փողոցների լուսավորություն՝ 58.4 մլն դրամ արժեքով:

- Կատարվել է Հանքավան համայնքի գերեզմանատան ցանկապատման աշխատանքներ ընգհանուրը 989.8 հազ դրամ:

ՀՀ Կոտայքի մարզպետի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի ,,Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու մասին՞՞ N 266-Ա որոշմամբ աշխատանքային խմբի հետ համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի N 371-Ն հրամանի հարցաշարի՝ քաղաքաշինության, տրանսպորտի և կապի բնագավառում վարչական հսկողություն է իրականացվել մարզի 2 քաղաքային և 23 գյուղական համայնքներում:

Բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից կարևորվում են հետևյալները.

- ջրամատակարարման և ջրահեռացման ներհամայնքային ցանցի մաշվածությունը,
- կոյուղու մաքրման կայանների բացակայությունը,
- գերեզմանատների հատակագծերի բացակայությունը,
- բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների, տանիքների և կոմունիկացիաների վերանորոգում:

<u>Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ</u>

Մարզում ընդհանուր օգտագործման պետական ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 581.28 կմ որից 56.18 կմ՝ միջպետական, 274.8 կմ ՝ հանրապետական և 250.3 կմ տեղական նշանակության:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի միջոցներից մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ամառային և ձմեռային ընթացիկ պահպանության աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվել էր 475,2 մլն դրամ: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 333.8 կմ ճանապարհների ամառային և ձմեռային ընթացիկ պահպանման աշխատանքներ:

ՀՀ Կոտայքի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ամառային և ձմեռային ընթացիկ պահպանման նպատակով 2015 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 85,0 մլն դրամ: Հատկացված գումարի շրջանակներում հնարավոր է եղել Կոտայքի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացնել՝ 79.3 կմ ամառային և 119.0 կմ ձմեռային ընթացիկ պահպանման աշխատանքներ:

Մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների կարգավորման նպատակով 2015 թվականին ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից 6-րդ հրատապ ծրագրով

հատկացվել է 210,0 մլն դրամ թվով 8 համայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման համար:

Ըստ համայնքների գումարները բաշխվել են հետևյալ չափերով՝ ք.Հրազդան – 80,0 մլն դրամ, ք.Չարենցավան – 30,0 մլն դրամ, ք.Ծաղկաձոր – 20,0 մլն դրամ, ք.Եղվարդ – 30,0 մլն դրամ, ք.Բյուրեղավան – 20,0 մլն դրամ, գ.Առինջ – 15,0 մլն դրամ, գ.Պռոշյան – 5,0 մլն դրամ, գ.Լեռնանիստ – 10,0 մլն դրամ:

2015 թվականի ՀՀ պետական միջոցների հաշվին 193,7 մլն դրամ ընդհանուր գումարով հիմնանորոգվել է Մրգաշեն-Նոր Արտամետ մարզային նշանակության ավտոճանապարհի 3.05 կմ հատվածը:

ՀԲ-ի միջոցներով ընթացիկ տարում հիմնանորոգվել են Հ5–Կարենիս–Չարենցավան ճանապարհահատվածը՝ 578,0 մլն դրամով (5.3կմ) և Աբովյան-Նոր Գեղի-Եղվարդ ավտոճանապարհի 12 կմ հատվածը՝ 1,108.0 մլն դրամով:

Ընդհանուր առմամբ 2015 թվականին մարզում ճանապարհաշինության և ճանապարհների պահպանման նպատակով աշխատանքներ են իրականացվել հետևյալ ուղղություններով.

Հանրապետական ճանապարհների պահպանում	***475,2 մլն դրամ***
Մարզային ճանապարհների պահպանում	***85,0 մլն դրամ***
Համայնքներում առաջնահերթ խնդիրների կարգավորում	***210,0 մլն դրամ***
Հանրապետական ճանապարհների հիմնանորոգում	***1,686.0 մլն դրամ***
Մարզային ճանապարհների հիմնանորոգում	***193,7 մլն դրամ***
Ընդհանուրը	***2,649.9 մլն դրամ***

Մարզի բնակավայրերը այլ մարզերի հետ կապվում են գործող 25 միջմարզային երթուղիների միջոցով, որոնց աշխատանքները կազմակերպում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

Տրանսպորտի բնագավառում մարզպետարանի կողմից կազմակերպվել են ներմարզային 36 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներ, իսկ մարզի 3 քաղաքներում (Հրազդան, Աբովյան, Եղվարդ) գործում են ներհամայնքային 6 երթուղիներ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

2015 թվականին ծավալուն աշխատանքներ են կազմակերպվել մարզպետարանի գործունեության հրապարակայնությունն ապահովելու և մարզային գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են մարզպետարանի աշխատանքային ծրագրերի շրջանակներում կազմակերպվող միջոցառումների, իրադարձությունների, աշխատանքային խորհրդակցությունների, քննարկումների, հանդիպումների, մարզպետի այցելությունների և այլ համանման ձեռնարկների լուսաբանման աշխատանքները (շուրջ 210 թողարկում):

Կազմակերպվել են մարզպետարանի պաշտոնական կայքի տեղեկատվական համալրման աշխատանքները, պարբերաբար խմբագրվել են կայքի տարբեր ենթահամակարգերը և համալրվել անհրաժեշտ նոր տեղեկատվությամբ:

Պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնում տեղադրվող հաղորդագրություններն ուղեկցել են մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից պատրաստվող տեսանյութերով:

Մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրվել են մարզպետարանի աշխատանքային ծրագրերը, տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, մարզպետի, համայնքների ղեկավարների և ավագանու որոշումները:

Ընդհանուր առմամբ 2015 թվականին, միջին ամսեկան ցուցանիշով, մարզպետարանի պաշտոնական կայքի այցելուների թիվը աճել է գրեթե 90 %-ով:

ՀՀ Տարածքային կառավարման նախարարարության կողմից մշակված մեթոդաբանության շրջանակներում իրականացվել են մարզի խորհրդի նիստերի լուսաբանման աշխատանքները (թվով 5 մամուլի հաղորդագրություն):

Շարունակաբար ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել մարզի համայնքներում առկա հանրային իրազեկման միջոցները: Իրականացվել է մարզի համայնքների կայքերի մոնիտորինգ, որի հիման վրա կատարվել է վերլուծություն: Հիշյալ վերլուծության, համայնքների ղեկավարների աշխատակազմերի հետ համագործակցության և մարզպետարանի կողմից վերջիններիս համապատասխան մեթոդական ցուցումներ տրամադրելու արդյունքում զգալիորեն բարելավվել են համայնքային կայքերի աշխատանքները:

Այս ամենով հանդերձ հարկ է նշել, որ <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքը լավագույնս կիրառելու համար Կոտայքի մարզպետարանը արժանացել է <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ-ի <<Ամենահրապարակային գործող պետական մարմին>> անվանակարգին և խորհրդանշական <<Ոսկե բանալու>>, իսկ kotayk.mtaes.am պաշտոնական կայքի թափանցիկությունն ու մատչելիությունը նույն ՀԿ-ի կողմից գնահատվել է բարձր ցուցանիշներով:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Համաձայն 2015թ.-ի ներքին աուդիտի տարեկան ծրագրի իրականացվել է թվով 27 աուդիտ, որից 2-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 4-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 21-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում:

Աուդիտի արդյունքներով արձանագրված թերությունները, բացթողումները և անհամապատասխանության դեպքերը քննարկվել են, որի հիման վրա տրվել են համապատասխան հանձնարարականներ (գործողությունների ծրագիր)՝ դրանց վերացման և հետագա գործունեությունը բարելավվելու ուղղությամբ:

2015 թվականին իրականացված աուդիտների արդյունքներով թվով երկու բաժնետիրական ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող տարեկան շահութաբաժնի գումարները լրացուցիչ ավելացվել են 6 մլն. 591 հազար դրամով, իսկ թվով 15 ՊՈԱԿ-ների ֆինանսավորման ծավալներից նվազեցվել է 4 մլն. 523 հազար դրամ:

ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

<u>Փաստաթղթաշրջանառություն</u>

2015թ.հունվարի 1-ից դեկտեմբերի 18-ը ընկած ժամանակահատվածում մուտքագրվել է 2220 դիմումներ քաղաքացիներից, նախորդ տարվա 980-ի դիմաց, որոնք խմբավորվում են ըստ հարցի բնույթի՝

Ֆինանսական	- 645
Առողջապահության	- 355
Երեխայի վկայագրելու, գիշերօթիկ հաստատություն	

ընդունվելու և դուրս գրելու, որդեգրման	- 175
Տրանսպորտ և կապ	- 2
Գյուղատնտեսական և հողաշինարարական	- 32
Բնակարանային	- 54
ՌԴ մուտքի թույլտվության միջնորդություն	- 777
Այլ հարցեր	- 180

Քաղաքացիների ընդունելություն

2015 թ. հաստատված ժամանակացույցի համաձայն մարզի տարածաշրջաններում մարզպետի կողմից կազմակերպված ընդունելությանը մասնակցել են 223 քաղաքացի, նախորդ տարվա 352-ի դիմաց:

ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մարզպետարան

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել են ***365*** որոշումներ, ***163*** կարգադրություններ, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից՝ ***321*** հրամաններ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2015 թվականի հաստիքացուցակում առկա են 136 հաստիքներ, որից 8-ը՝ հայեցողական պաշտոններ են, 120-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ և 8-ը տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններ: Պաշտոնների են նշանակվել 17 անձ, որից 9-ը՝ հայեցողական և 8-ը տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններում: Պաշտոններից ազատվել են 13 անձ, որից 7-ը՝ հայեցողական և 6-ը տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններից:

Քաղաքացիական ծառայություն

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առկա են քաղաքացիական ծառայության 120 պաշտոններ, որից 7-ը թափուր են: Կայացել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 13 մրցույթներ: Պաշտոնների են նշանակվել 12 քաղաքացիական ծառայողներ, որից՝ 9-ը մրցույթով, 3-ը արտամրցութային կարգով: Պաշտոններից ազատվել են 11 քաղաքացիական ծառայողներ, որից 8-ը անձնական դիմումի, 1-ը՝ <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի <<ժգ>> կետի (քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը, իսկ աշխատակազմի ղեկավարի պաշտոնն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալը) և 2-ը՝ <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի <<իբ>> կետի (սույն օրենքի 12^2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնին նշանակելը) համաձայն: Ատեստավորվել են 35 քաղաքացիական ծառայողներ, վերապատրաստվել՝ 38-ը: Քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ են շնորհվել 7 քաղաքացիական ծառայողների, իսկ առավելագույն դասային աստիճան՝ 3: Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կնքվել է 8 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել է 11-ը:

Առողջապահական բաժնետիրական ընկերություններ և պետական ոչ առևտրային կազմակերպություններ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 8 առողջապահական ընկերություններ և 27 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Թափուր են 11 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների պաշտոններ: Կայացել է 1 առողջապահական ընկերության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ: Պաշտոնի նշանակվել է 1 առողջապահական ընկերության տնօրեն: 1 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ <<Խիստ նկատողություն>> կարգապահական տույժի:

Կրթական, մշակութային և մարզական պետական ոչ առևտրային կազմակերպություններ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 94 պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որից՝ 1 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոցներ, 59 միջնակարգ դպրոցներ, 31 հիմնական դպրոցներ և 1 հատուկ (օժանդակ) դպրոց: Թափուր է 1 պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոն: Նշանակվել են 4 պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր տնօրեններ: Ազատվել է 1 պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն՝ օրենքով սահմանված տնօրենի պաշտոնավարման առավելագույն տարիքը (65 տարեկան) լրանալու կապակցությամբ: 2 պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր տնօրեններ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ 1-ը <<Խիստ նկատողություն>>, մյուսը՝<<Նկատողություն>> կարգապահական տույժի:

ՄԱՐԶՊԵՏ Կ. ԳՈՒԼՈՅԱՆ